

Ա. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

Հոսանքի բիմիական աղբյուրները՝ գալվանական էլեմենտները և ակումուլյատորները վաղուց կարեռ կիրառություն են գտել տեխնիկայում և ժողովրդական տնտեսության մեջ: Այդ էլեմենտներում, ինչպես հայտնի է, բիմիական էներգիան վեր է ածվում էլեկտրականի, այսինքն՝ լուրաքանչյուր գալվանական էլեմենտ (կամ ակումուլյատոր) ներկայացնում է մի սիստեմ, որում ընթանում է որոշակի բիմիական ռեակցիա, երբ էլեմենտի արտաքին շղթան փակ է: Այդ ռեակցիայի ազատ էներգիան է, որ վեր է ածվում էլեկտրական էներգիայի:

Այստեղից օրինական հարց է ծագում. չի՞ կարելի արդյոք ստեղծել այնպիսի գալվանական էլեմենտ, որում ընթանաբոլորին հայտնի և մատչելի ռեակցիան՝ քարածիսի կամ այլ վառելանյութի այրման ռեակցիան, և նրանց ջերմային էներգիայի հաշվին էլեմենտը տա էլեկտրական էներգիա: Այդպիսի էլեմենտներից բաղկացած մարտկոցները կլինիկն կատարյալ ջերմաելեկտրացենտրալներ, որոնցում վառելանյութից անմիջապես կատարվեր էլեկտրաէներգիա, առանց ներկայում կիրառվող այն բարդ միջան-

վյալ պրոցեսների, որոնք պահանջում են նաև հարմարանք՝ վառելանյութն այրելու համար, ապա կաթսաներ՝ գոլորշի ստանալու համար և վերջապես գեներատորներ՝ էլեկտրական էներգիա ստանալու համար: Այս բարդ կոմպլեքսը կոնդակորվեր մեկ սիստեմում՝ նշված քարածին էլեմենտում, որի հայր ընեղները կանեին ամբողջ էլեկտրացանցեր: Անամի հետաքրքիր պրոբլեմ, որը դրված է էլեկտրաքիմիայի առջև հարյուր տարուց ի վեր: Այսպիսի էլեմենտները, որոնցում առաջարկվում է օգտագործել վառելանյութեր՝ քարածուխ, նավթ, բնական գազ, ջրածին և այլն, անվանում են վառելանյութային էլեմենտներ:

Տեսական հիմքերը

Առաջադրվող հարցի տեսական լուծումը տրվում է գալվանական էլեմենտների թերմոդինամիկայում: Այստեղ քըննարկվում է այն հարցը, թե էլեմենտում ընթացող բիմիական ռեակցիայի ջերմային էֆեկտը ո՞ր մասը կարող է վերածվել էլեկտրական էներգիայի: Այսպես՝ եթե էլեմենտում ընթացող $A + B \rightarrow C$ պրո-

ցեսը իրականացվեր զուտ թիմիորեն (այսինքն A և B նյութերի փոխապղումից ստանալինք C նյութը), ապա այն կզուգակցվեր որոշակի Q ջերմության անջատմամբ: Իսկ եթե այդ ռեակցիան տարվի էլեմենտում, այսինքն ոչ թե թիմիորեն, այլ էլեկտրաքիմիորեն (այդ երկու մեխանիզմների մասին կխոսվի հետո), ապա կստացվի էլեկտրական էներգիա: Պարզվում է, որ էլեմենտից ստացվող էլեկտրաէներգիայի (W) և էլեմենտում ընթացող ռեակցիայի ջերմային էֆեկտի միջև գոյություն ունի հետևյալ կապը:

$$W = Q + q \quad (1)$$


որտեղ՝ q-ն ջերմության այն քանակությունն է, որ կարող է էլեմենտը վերցնալ միջավայրից, կամ տալ շրջապատող միջավայրին: Հետևաբար ստացվող էլեկտրաէներգիան կարող է կամ մեծ լինել ռեակցիայի ջերմային էֆեկտից կամ էլ փոքր: Հնարավոր է նույնիսկ, որ Q-ն ինչի բացասական, q-ն դրական և բացարձակ արժեքով ավելի մեծ քան Q-ն: Այդ դեպքում W-ն նույնպես կլինի դրական. դա նշանակում է, որ էլեկտրական էներգիա կարող է ստացվել նույնիսկ էնդոթերմիկ ռեակցիաներից, այսինքն այնպիսի ռեակցիաներից, որոնք ընթանում են ջերմության կլանմամբ: Այսպիսի էլեմենտների տված էլեկտրաէներգիան կլինի զուտ ի հաջիվ արտաքին միջավայրից կլանած ջերմության: Մենք չենք խորանա այս հարցերի մեջ, միայն նշենք, որ (1) արտահայտությունը էլեմենտի էներգետիկ հիմքն է, ուր զ մեծությունը հնարավոր է որոշել փորձնականորեն կամ կողմնակի հաշվարկներով: Պարզվում է, որ քարածխային էլեմենտի համար, որում պետք է ընթանա $C + O_2 \rightarrow CO_2$ պրոցեսը, q-ն -240 կալ/մոլ է, իսկ ռեակցիայի ջերմային էֆեկտը՝ Q-ն 94250 կալ/մոլ : Ուրեմն էլեմենտի տված էլեկտրական էներգիան (W) կլինի $94250 - 240 \approx 94010 \text{ կալ/մոլ}$: Այստեղից՝ էլե-

մենտի օգտակար գործողության գործակիցը կկազմի $\frac{94010}{94250} \cdot 100 = 99,75\%$: Եթե

նկատի ունենանք, որ ջերմակենտրուակայաններում քարածխի այրման էներգիայի մոտ 30%-ն է օգտագործվում, ապա ակնհայտ կդառնա քարածխային էլեմենտի հրապուրիչ հեռանկարները: Ստացվում է, որ այդ էլեմենտի իրագործմամբ ոչ միայն խստ պարզեցվում է քարածխի այրումից էլեկտրաէներգիայի ստացման պրոցեսը, այլև խստ բարձրանում է ածխի այրման էֆեկտիվությունը:

Գործնական ուղիները


Վերը նշված տեսական հիմքերը հայտնի են եղել անցյալ դարի վերջերից: Այժմ հետաքրքիր է իմանալ այն գործնական քայլերի մասին, որոնք կատարվել են այդ բնագավառում, և՝ ինչ է խոստանում տվյալ պրոբլեմը: Այս հարցերը հասկանալու համար անհրաժեշտ է որոշ գաղափար ունենալ վառելանլութային էլեմենտի աշխատանքի մեխանիզմի մասին: Սկսենք նրանից, թե ինչ է նշանակում որևէ զուտ թիմիական պրոցես տանել էլեկտրաքիմիորեն: Պարզության համար ըննարկենք ջրածնի այրման ռեակցիան օդում՝ $H_2 + O \rightarrow H_2O$: Այս ռեակցիան գնում է չափազանց արագ և մեծ ջերմային էֆեկտով (136660 կալ/մոլ): Այժմ պատկերացնենք այդ ռեակցիայի էլեկտրաքիմիկան իրականացնեմք: Դրա համար վերցնենք թիմիապես կայուն մետաղի՝ ասենք պլատինի 2 թիթեղներ (էլեկտրոդներ) և ընկդիմենք ջրի մեջ, որի մեջ լուծված է որևէ էլեկտրահաղորդիչ միացություն՝ հիմք, թոռ կամ աղ (էլեկտրոլիտ): Էլեկտրոդներից մեկը թող ողողվի թթվածով, մյուսը՝ ջրածնով (նկ. 1): Դրա հետևանքով էլեկտրոդների վրա համապատասխանաբար կադսորցվեն (կկաչեն մակերեսներին) ջրածնի և թթվածնի ատոմներ: Հայտնի է, որ ջրա-




Ժինը, որպես վերականգնիչ, հակում ունի էլեկտրոններ տալու, իսկ թթվածինը որպես օքսիդիչ՝ էլեկտրոններ ընդունելու: Այդ պատճառով ջրածնային էլեկտրոդի վրա ջրածնի ատոմները իրենց էլեկտրոնները կտան էլեկտրոդին, իսկ թթվածնային էլեկտրոդում, ընդհակառակն, էլեկտրոնները մետաղից կանցնեն թթվածնին: Դրա հետևանքով թթվածնի և ջրածնի ատոմները համապատասխանաբար կվերածվեն H^+ և O'' իոնների և կանցննեն լուծույթ (էլեկտրոլիտ), ընդ որում ջրածնային էլեկտրոդը կլիցըրավորվի բացասական լիցըրով՝ ջրածնի ատոմներից ստացված էլեկտրոնների հաշվին, իսկ թթվածնային էլեկտրոդը, որից էլեկտրոններն անցել են թթվածնի ատոմներին, կլիցըրավորվի դրականապես: Եվ, եթե այդ էլեկտրոդները միացվեն արտաքին հաղորդիչով, ապա ջրածնային էլեկտրոդից էլեկտրոնները կշարժվեն դեպի թթվածնայինը, ապահովվով ջրածնի և թթվածնի իոննացման տևական ընթացքը: Էլեկտրոլիտ անցած H^+ և O'' իոնները կշարժվեն իրար հանդիման և միանալով կառաջացնեն ջուր՝ $2H^+ + O'' = H_2O$:

Այսպիսով, էլեմենտում տեղի են ունենում հետևյալ պրոցեսները.

Ջրածնային էլեկտրոդի վրա՝



թթվածնային էլեկտրոդի վրա՝




$2H^+ + O^- \rightarrow H_2O$

Գումարային պրոցեսը՝ $H_2 + O \rightarrow H_2O$:

Զրածնից և թթվածնից ստացանք ջուր, որի շնորհիվ ջրածնային էլեկտրոդից տեղի ունեցավ էլեկտրոնների հոսք դեպի թթվածնային էլեկտրոդը: Այս սխտեմն իրենից ներկայացնում է ջրածնա-թթվածնային էլեմենտ, որի էլեկտրաշարժ ուժը կազմում է 1.23 վոլտ: Ենելով ջրածնաթթվածնային էլեմենտի աշխատանքի մեխանիզմից հետո է կոահիք $H_2 + O \rightarrow H_2O$ պուտ քիմիական ռեակցիայի մեխանիզմը: Մենք տեսանք, որ ջրածնին իր էլեկտրոնը արտաքին հաղորդակով տալով թթվածնին վեր է ածվում դրական իոնի, իսկ թթվածնին՝ բացասական, այնուհետև անցնելով լուծույթ նրանք հանդիպում են և առաջացնում ջուր: Ուրեմն, զուտ քիմիական ռեակցիայի ժամանակ էլեկտրոնի անցումը ջրածնից թթվածնին տեղի է ունենում անմիջապես, եթե նրանց փոխազդեցության պահին այդ ատոմները գտնվում են միմյանց մոտ — ջրածնիը էլեկտրոնները տալիս է հարևան թթվածնի ատոմին, որից հետո ստացված իոնները միանալով առաջացնում են ջուր:

Իսկ ի՞նչ է ներկայացնում էլեկտրոնի անցումը ջրածնից իր հարևան թթվածնի ատոմին: Դա հոսանք է, ավելի ճիշտ՝ միկրոհոսանք, որն առաջանում է տարածության տարբեր տեղամասերում, ունենալով տարբեր ուղղություններ: Ուստի այդ միկրոհոսանքների հանրահաշվական գումարը կլինի վրո, իսկ նրանց էլեկտրական էներգիան կվերածվի շերմային էներգիայի: Այսպիսով, տվյալ ռեակցիայի քիմիական և էլեկտրաքիմիական մեխանիզմների մեջ սկզբունքային տարբերություն չկա: Տարբերությունը լոկ այն է, որ էլեկտրաքիմիական պրոցեսի դեպքում էլեկտրոնների անցումը ջրածնից թթվածնին տեղի է ունենում տարածականորեն



մի ուղղությամբ. Ընդ որում բոլոր ջրածնային ատոմները գտնվում են տարածության մի տեղում, թթվածնային ատոմներ՝ մի այլ, իսկ որպես էլեկտրոնների փոխադրիչ ծառայում է մետաղական հաղորդիչը՝ էլեմենտի արտաքին դիմադրությունը:

Այժմ վերադառնանք ջրածնային էլեմենտին: Այն կարելի էր իրականացնել վերը նշված ջրածնա-թթվածնային էլեմենտի ձևով (նկ. 2). Եթե ածխածինը ընդունակ լիներ իոնանալու և անցնելու լուծույթ, ապա բացասական բևեռի վրա (ինչպես ջրածնային էլեկտրոդի դեպքում) կընթանար՝ $C \rightarrow C^{++++} + 4e$ ռեակցիան, իսկ թթվածնայինի վրա՝ $O_2 + 4e \rightarrow 2O''$ ռեակցիան. Գումարայինը կլինի՝ $C + O_2 \rightarrow C^{++++} + 2O'' \rightarrow CO_2$:

Այսպիսով էլեմենտում կընթանար ածխի այրման ռեակցիան, և կստացվեր հոսանք: Սակայն ամբողջ հարցը նրանումն է, որ ածխածինը չի իոնանում նույնիսկ շատ բարձր շերմաստիճաններում (1000 և ավելի) այնպես, որ մինչև այժմ վերջնականապես չի հաջողվել իրականացնել այս ռեակցիայի էլեկտրաքիմիական ընթացքը: Գերմանական էլեկտրաքիմիկ Բաուերին է միայն հաջողվել (1937 թ.)

այս ռեակցիան տանել էլեմենտում այն էլ մինչև ածխի ոչ լրիվ այրում՝ $C + O \rightarrow CO$ ($1000-2000^{\circ}\text{C}$):

Լաբորատոր մասշտաբով գործող վառելանյութային էլեմենտներ


Քարածխային էլեմենտի իրականացման անհնարինությունը հիասթափեցնում է, բայց բոլորովին չի բացառում մյուս՝ հեղուկ և գազային վառելանյութերի (ջրածին, բնական գազ, նավթ, բենզին և այլն) էլեմենտների ստեղծման հնարավորությունը: Ներկայումս լաբորատոր մասշտաբով այդ էլեմենտները գործում են, և նրանց ուսումնասիրությունը խոստանում է տվյալ էլեմենտների գործնական կիրառությունը: Իրականացված էլեմենտներից առաջինը հանդիսանում է ջրածնա-թթվածնային էլեմենտը: Այս էլեմենտն ունի պարզ կառուցվածք: Նրա էլեկտրոդները պատրաստվում են ակտիվացրած ածխի և մետաղների (արծաթ, նիկել) նույր փացուց, սեղման և թթման միջոցով (մետաղակերամիկական մեթոդ): Նման թիթեղները ունենում են որոշակի ծակոտկենություն և շատ ակտիվ մակերես, որն ապահովում է ջրածնի և թթվածնի իոնացման էլեկտրաքիմիական պրոցեսները: Այս ծակոտկեն էլեկտրոդների միջև եղած տարածությունը լցվում է կալիումի կամ նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծություն, իսկ նրանց արտաքին մակերեսները չոր են և ողողվում են համապատասխանաբար ջրածնով և թթվածնով (կամ օդով): Գագերը դրսից ծակոտիներով դիֆուզվում են դեպի հիմքի հետ շփվող էլեկտրոդների մակերեսները և համապատասխանաբար վերածվում իոնների:

Նշված էլեմենտների աշխատանքի էֆեկտիվությունը կախված է էլեկտրոդային նյութի ակտիվությունից, նրանց ըստացման եղանակից: Այս հարցերի լայնություննասիրությունը կատարվել է $0-$

Դավթյանի և Ս. Սպիրիդոնովի կողմից:
Նրանց էլեմենտներում ջրածնի էլեկտրա-
քիմիական այրումը օդով հասցված է
զգալի արագության: Այդ էլեմենտների
էլեկտրաշարժ ուժը կազմում է 1 վոլտ՝
 $30-50 \text{ mA/cm}^2$ հոսանքի խտության
դեպքում: Առավել բարձր ճնշման էլեմենտ
է ստեղծել անգիտածի գիտնական Բեկո-
նը: Նրա էլեմենտում ջրածնի և թթվածի
ճնշումը մոտ 50 մբնոլորտ է, էլեկտրույտի
ջերմաստիճանը մոտ՝ 200°C , էլեկտրաքի-
միական պրոցեսի արագությունը 10 ան-
գամ ավելի, քան նախորդ կոնստրուկ-
ցիաներում:

Իսկ հնարավոր չէ՝ արդյոք այս եղա-
նակով իրականացնել հեղուկ և գազային
վառելանյութերի էլեկտրաքիմիական այ-
րումը: Հետազոտությունները ցուց են
տալիս, որ դա հնարավոր է բարձր ջեր-
մաստիճանում ($600-700^\circ\text{C}$), հատուկ ծակոտկեն էլեկտրոդների և հատուկ էլեկ-
տրոդիտների դեպքում: Այսպես, պրոֆե-
սոր Օ. Դավթյանը առաջին իրականաց-
րեց $\text{CO}-ի$ այրման էլեմենտը (նկ. 3): Այդ էլեմենտի դրական էլեկտրոդը իրե-
նից ներկայացնում է երկաթի, նրա մագ-
նիսական օքսիդի և շամոտի կափի փոշի-
ներից սեղմած և թրծած ծակոտկեն թի-
թեղ, իսկ բացասական բևեռը նույն ծա-
կոտկեն էլեկտրոդն է, առանց երկաթի
մագնիսական օքսիդի: Էլեկտրոլիտը այս-
տեղ պինդ (կարբոնատների և օքսիդնե-
րի հալույթ) է, օժտված է բավարար էլեկ-
տրահաղորդականությամբ, ընդ որում հո-
սանքը նրանում հաղորդվում է բացառ-
ապես թթվածնի իոններով: Նման էլեմեն-
տի կատարելագործումից հետո Դանիել-
Բեկը և Բրյուար իրականացրել են բեն-
զինի, բնական գազի, կերոսինի էլեկտրա-
քիմիական այրումը: Այդ էլեմենտներում
լարումը կազմում է մոտ 0,8 վոլտ, վառե-
լանյութի ջերմատվության մոտ 60 տոկո-
սը վեր է ածվում էլեկտրաէներգիայի:

Վերջում խոսենք բարածխալին էլե-



մենտների իրականացման ներկայումս,
տարվող աշխատանքների մասին: Բանի
որ առաջմ հնարավոր չէ ստեղծել ուղա-
կի աշխատող բարածխալին էլեմենտ,
ապա առաջադրվում են հետաքրքիր մըտ-
քեր՝ կողմնակի ձևով լուծելու բարածխի
էլեկտրաքիմիական այրման պրոբլեմը: Այդ տեսակետից հետաքրքիր է ամերի-
կացի ինժեներ Գորինի առաջարկը: Դրա
էությունը հետևյալն է: հատուկ գեներա-
տորներում բարձր ջերմաստիճանի տակ,
ջրային գոլորշիների և բարածխի փոխակ-
դեցությունից ստացվում է ջրային գազ՝ H_2 և CO : Բանի որ այս ռեակցիան էն-
դութերմիկ է, ապա որոշ քանակությամբ
բարածում այրելու և սիստեմի ջերմաս-
տիճանը (700°C) պահպանելու համար
ջրային գոլորշիների հետ մասամբ տըր-
վում է նաև օդ: Այդ հարմարանքի վերին
մասում տեղակորդվում են նշված էլեմենտ-
ները, որոնք աշխատում են Դավթյանի
մշակած էլեմենտի սկզբունքով: Ստացված
ջրային գազը ողողում է էլեմենտների բա-
ցասական բևեռը, իսկ դրական բևեռներին
տրվում է օդ: Այդպիսի վառելանյութալին
էլեմենտների մարտկոցում կընթանա
 $\text{CO}-ի$ և ջրածնի այրում և կստացվի էլեկ-
տրաէներգիա: Ամբողջ հարմարանքում
(Շարունակություն՝ 48-րդ էջում)